ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5

ԵՊՀ ԻՄ տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

03.03. 2018թ. Ք. Իջևան

Նախագահ Ն. Խուդավերդյան

Քարտուղար Ա. Սարիբեկյան

Խորհրդի նիստին մասնակցում էին խորհրդի բոլոր անդամները:

Ֆակուլտետի խորհրդի նախագահ Ն. Խուդավերդյանը բացելով ֆակուլտետի խորհրդի նիստը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և ներկայացրեց օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1.2017-18 ուս. տարվա տնտեսագիտության ֆակուլտետի երկու մասնագիտությունների ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմի ձևավորման մասին:
/Զեկ Ն. Խուդավերդյան/
2.2017-2018 ուս. տարվա ավարտական կուրսերի ամփոփիչ քննությունների և ավարտական աշխատանքների պաշտպանության գրաֆիկների հաստատման մասին:
/Զեկ. Ն. Խուդավերդյան/
3.Ընթացիկ հարցեր

Ֆակուլտետի խորհրդի անդամների կողմից բաց քվեարկությամբ միաձայն ընդունվեց նիստի օրակարգը:

1.Լսեցին – Ն. Խուդավերդյանին

Նա նշեց, որ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմերում ընդգրկվում են տվյալ ոլորտի գործատուների և ակադեմիական հաստատությունների ներկայացուցիչներ, համապատասխան ֆակուլտետի դեկանը կամ նրա տեղակալը, ամբիոնների վարիչները, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստերն արձանագրում է քարտուղարը, որ տվյալ հաստատության աշխատակից է և ահնձնաժողովի անդամ չէ: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմի առնվազն 50 տոկոսը պետք է լինեն ոչ տվյալ հաստատության աշխատակիցներ: Հաշվի առնելով այս ամենը Ն. Խուդավերդյանը ներկայացրեց 2017-18 ուս. տարվա

տնտեսագիտության ֆակուլտետի երկու մասնագիտությունների ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմը.

«Տնտեսագիտության տեսություն»

1.Ղալթախչյան Արթուր Արծրունի	ՀՀ ԿԲ-ի դրամավարկային և ֆինանսական վիճակագրության բաժնի պետ, նախագահ,
2.ԽուդավերդյանՆելլի Բաբկենի	տեխ.գ.թ., դոցենտ, տնտեսագիտության ֆակուլտետի դեկան,
3.Միքայելյան Միքայել Վարազդատի	տ.գ.դ., պրոֆեսոր, ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչի ժ/պ,
4.Զուրաբյան Մարատ Հովիկի	բ.գ.թ., ՀՈՒԲ վարիչ,
5. Մարգարյան Հասմիկ Գառնիկի	տ.գ.թ., ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ,
6.Մելիքջանյան Լևոն Վալոդի	«ԱՇԲ» ՓԲԸ «Իջևան» մասնաճյուղի կառավարիչ,
7.Շիմշիրյան Գայանե Աշոտի	ՀՀ ԿԲ Դիլիջանի «Գիտելիք հանուն զարգացման» կենտրոնի ղեկավարի տեղակալ:

«Սերվիս»

1. Ապրեսյան Մեխակ Վեմիրի	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահի առաջին տեղակալ , նախագահ
2.Հովհաննիսյան Գուրգեն Ժորժիկի	ԵՊՀ բակալավրիատի բաժնի պետ, տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժ/պ, աշխ. գիտ.թեկնածու, դոցենտ,
3.ԽուդավերդյանՆելլի Բաբկենի	տեխ.գ.թ., դոցենտ, ֆակուլտետի դեկան,
4.Սարուխանյան Մուշեղ Լևոնի	բ.գ.թ., ասիստենտ, ՀՈՒԲ վարիչի տեղակալ

5.Ազիզյան Հռիփսիմե Մկրտչի	մ.գ.թ., տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ,
6.Չատյան Նարեկ Լևոնի	«Ապագա Ռեզորտ» հանգստյան գոտու մենեջեր,
7.Նազինյան Գրիգոր Ցոլակի	Իջևան «ԱԱՊԿ» ԲԲԸ –ի տնօրեն:

Արտահայտվեցին - Գ. Հովհաննիսյանը, Պ. Ասիլբեկյանը, Գ. Ավետիսյանը

Նրանք նշեցին, որ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմը համապատասխանում է մասնաճյուղում գործող ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգի ընդհանուր դրույթներին: Արտահայտվողներն առաջարկեցին հաստատել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմը:

Որոշեցին - Հաստատել 2017-18 ուս. տարվա տնտեսագիտության ֆակուլտետի երկու մասնագիտությունների ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմը և ներկայացնել տնօրենի հաստատմանը:

2.Լսեցին - Ն. Խուդավերդյանին

Ն. Խուդավերդյանը ներկայացրեց 2017-2018 ուս. տարվա ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման գրաֆիկները.

«Տնտեսագիտության տեսություն»

Ավարտական աշխատանքների պաշտպանություն 26.05.18թ.

«Սերվիս»

Ավարտական աշխատանքների պաշտպանություն 27.05.18թ.

Որոշեցին - հաստատել 2017-2018 ուս. տարվա ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման պաշտպանության գրաֆիկները և ներկայացնել տնօրենի հաստատմանը:

3.Լսեցին - ընթացիկ հարցեր

3.1.Լսեցին - 2017-18 ուս. տարվա ավարտական աշխատանքների նախապաշտպանության գրաֆիկների հաստատման մասին:

/Զեկ. Ն. Խուդավերդյան/

Ն. Խուդավերդյանը նշեց, որ ուսանողի կողմից բակալավրի ծրագրի ելքային կրթական արդյունքներին համապատասխան մասնագիտական

գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը հաստատվում է ավարտական աշխատանքի կատարումով և պաշտպանությամբ: Այդ իսկ պատճառով կարևոր է ավարտական աշխատանքների նախապաշտպանության կազմակերպումը և անցկացումը: Ելնելով սրանից ներկայացնում եմ 2017-18 ուս. տարվա ավարտական աշխատանքների նախապաշտպանության գրաֆիկները

Տնտեսագիտության տեսություն 07.05.2018թ.13^{30}

Սերվիս 05.05.2018թ ., 13^{30}:

Որոշեցին - հաստատել 2017 - 18 ուս. տարվա ավարտական աշխատանքների նախապաշտպանության գրաֆիկները :

3.2 Լսեցին - Ֆակուլտետի «Ընդհանուր տնտեսագիտության»ամբիոնի դասախոս Ա. Ալեքսանյանի պարգևատրման մասին:
/Զեկ Ն. Խուդավերդյան/

Նա նշեց, որ ֆակուլտետի աշխատանքների արդյունավետության բարձրացման համար միշտ էլ օգտագործվել են տարբեր տեսակի խրախուսման ձևեր, այդ թվում նաև դրամական պարգևատրում: Ն. Խուդավերդյանը նշեց, որ մարտ ամսվա կտրվածքով առաջարկում է դրամական խրախուսանքի ներկայացնել ֆակուլտետի «Ընդհանուր տնտեսագիտության» ամբիոնի դասախոս Ա. Ալեքսանյանին աշխատանքային պարտականությունները բարեխիղճ և պարտաճանաչ կատարելու համար: Հարցը դրվեց քվեարկության և անցավ միաձայն:

Որոշեցին - «Ընդհանուր տնտեսագիտության » ամբիոնի դասախոս Ա. Ալեքսանյանին ներկայացնել դրամական պարգևատրման :

1.3. ***Բակալավրի ավարտական աշխատանքի շարադրանքի նվազագույն և առավելագույն ծավալների սահմանման մասին:***
/Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/

Ամբիոնի վարիչները նշեցին, որ բակալավրի ավարտական աշխատանքի նվազագույն և առավելագույն ծավալները սահմանում է ֆակուլտետի գիտական խորհուրդը՝ ելնելով տվյալ մասնագիտության առանձնահատկություններից: Նրանք նշեցին, որ ավարտական աշխատանքը պարունակում է հիմնախնդրի ինչպես տեսական մոտեցումները, այնպես էլ գործնական վերլուծությունները: Թեմայի առանձնահատկություններից ելնելով

«Սերվիս » և «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտությունների ավարտական աշխատանքները կարելի է ձևավորել 40-60 էջի սահմաններում:

Որոշեցին - սահմանել բակալավրի ավարտական աշխատանքի շարադրանքի նվազագույն և առավելագույն ծավալների չափը՝ 40-60 էջ:

Գիտխորհրդի նախագահ ***Ն. Խուդավերդյան***

Քարտուղար ***Ա. Սարիբեկյան***